600.0062.03.03.21

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

3 մարտի 2021 թվականի N62Ա
քաղ. Երևան

«ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԿՈՐՊՈՐԱՑԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) «Էներգետիկայի մասին» օրենքի 29-րդ հոդվածի համաձայն՝ լիցենզավորված անձը լիցենզավորված գործունեությանը վերաբերող հաշվետվությունները, այլ տեղեկատվությունը և անհրաժեշտ հիմնավորող փաստաթղթերը ներկայացնում է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ վերջինիս կողմից սահմանված ձևերով և կարգով,

բ) Հանձնաժողովի 2008 թվականի հունիսի 6-ի «Էլեկտրաէներգետիկական և ջերմամատակարարման համակարգերի լիցենզավորված անձանց կողմից Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով լիցենզավորված գործունեության վերաբերյալ տեխնիկատնտեսական տեղեկատվության ներկայացման կարգը հաստատելու մասին» N308Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) հաստատված հավելվածի՝ էլեկտրաէներգետիկական և ջերմամատակարարման համակարգերի լիցենզավորված անձանց կողմից Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով լիցենզավորված գործունեության վերաբերյալ տեխնիկատնտեսական տեղեկատվության ներկայացման կարգի №2 հավելվածի №2-1 և №2-7 ձևերով

սահմանված տեղեկատվության (այսուհետ՝ Տեղեկատվություն) ներկայացման ժամկետը մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 25-ն է,

գ) «Միջազգային էներգետիկ կորպորացիա» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) 2020 թվականի դեկտեմբեր ամսվա արդյունքներով Տեղեկատվությունը Հանձնաժողով է ներկայացրել 2021 թվականի հունվարի 27-ին,

դ) Հանձնաժողովը Որոշմամբ սահմանված ժամկետի խախտման փաստի ուսումնասիրման նպատակով 2021 թվականի փետրվարի 3-ից Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ, որի վերաբերյալ Ընկերությունը ծանուցվել է 2021 թվականի փետրվարի 3-ի N ԳԲ/34.4-Մ2-3/285-2021 գրությամբ,

ե) Ընկերությունը 2021 թվականի փետրվարի 9-ի N2/9-011 գրությամբ հայտնել է, որ Տեղեկատվությունն էլեկտրոնային եղանակով 2021 թվականի փետրվարի 19-ին ուղարկվել է Հանձնաժողովի աշխատակցի էլեկտրոնային փոստի հասցեին, իսկ Որոշմամբ սահմանված կարգին համապատասխան՝ ուղեկցող գրությամբ ներկայացման ժամկետի խախտումը պայմանավորված է եղել Ընկերության համապատասխան աշխատակցի անձնական խնդիրներով,

զ) Հանձնաժողովի կողմից իրականացված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը խախտել է Տեղեկատվության ներկայացման՝ Որոշմամբ սահմանված ժամկետը: Վարչական վարույթի շրջանակում Ընկերության ներկայացրած հիմնավորման հետ կապված հարկ է փաստել, որ Որոշմամբ սահմանված կարգի համաձայն՝ Տեղեկատվությունն էլեկտրոնային եղանակով կարող է ներկայացվել փաստաթղթերի էլեկտրոնային շարժի համակարգի (Mulberry) կամ Հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքի (www.psrc.am) առցանց հաշվետվությունների հանձնման էլեկտրոնային համակարգի միջոցով: Հանձնաժողովի աշխատակցի էլեկտրոնային փոստի հասցեին Տեղեկատվության ներկայացման հնարավորություն Որոշմամբ սահմանված կարգով նախատեսված չէ, և այդ եղանակով ներկայացնելը չի համարվում Տեղեկատվության՝ Որոշմամբ սահմանված կարգով պատշաճ ներկայացում: Իսկ Ընկերության աշխատակցի հետ կապված հիմնավորումը Տեղեկատվությունը Որոշմամբ սահմանված ժամկետից ուշ ներկայացնելու օբյեկտիվ պատճառ չի կարող համարվել, և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Տեղեկատվության ներկայացման՝ Որոշմամբ սահմանված ժամկետի խախտման համար Ընկերությանը նախազգուշացնել:
2. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
3 մարտի 2021թ.